

**Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի գնահատման  
չափանիշներ**

**IX դասարան**

1. Հարց- 1-ին ենթահարց՝ 3մ., 2-րդ ենթահարց՝ 1մ., 3-րդ ենթահարց՝ 1մ.:
2. Հարց- 1-ին ենթահարց՝ 3մ., 2-րդ ենթահարց՝ 1մ., 3-րդ ենթահարց՝ 1մ.:
3. Հարց- 1-ին ենթահարց՝ 3մ., 2-րդ ենթահարց՝ 1,5մ., 3-րդ ենթահարց՝ 0,5մ.:
4. Հարց- 1-ին ենթահարց՝ 2մ., 2-րդ ենթահարց՝ 2մ., 3-րդ ենթահարց՝ 1մ. :

**Հ.Գ. Կարևորել հարուստ բառապաշարը, յուրօրինակ վերլուծությունները, ուշադրություն դարձնել ոճական սխալներին՝ յուրաքանչյուրի համար հանելով 0,25մ.: Ռեղադրական սխալներին անդրադառնալ՝ խմբավորելով:**

**Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի  
պատասխաններ**

**IX դասարան**

**1. Թումանյանի «Փարվանա» բալլադը ժողովրդական լեգենդի՝ ավանդավեպի մշակում է: Լեգենդները հնում ստեղծված չափածո կամ արձակ պատմողական երկեր են, որոնց մեջ ժողովուրդը պատմում է մարդկանց և բնության հետ կապված իրադարձություններ. լեգենդի հիմքում ընկած է հրաշքը. այն շատ նման է առասպելին: Իսկ բալլադի հիմքում ընկած է պատմական հիմք: «Փարվանան» գրելիս Թումանյանը օգտագործել է հին հայկական մի ավանդություն՝ աղջկա կործանված սիրո և արցունքներից գոյացած լճի մասին: Այս պատմությունը նա լսել է Ջավախքի ծերունիներից, և նրա հանճարեղ գրիչը մեզ է թողել մի գլուխգործոց՝ երջանկության ու գեղեցկության հավերժական ձգտումներով:  
«Փարվանա» պարսկերենից թարգմանվում է թիթեռ. Իսկ ինչո՞ւ փարվանա, որովհետև սիրավառ կտրիճները, սիրո անշեջ հուրը գտնելու ճանապարհին,**

**Ըշտապելուց թև են առել  
Դարձել թեթև թիթեռներ,  
Ու տակավին հուր տեսնելիս՝  
Մեջն են ընկնում անհամբեր,**

**սակայն նրանցից և ոչ մեկին չի հաջողվում գտնել անշեջ հուրը՝ մաքուր, անապական սերը,**

**Ու այրվում են, այրվում անվերջ  
Կըտրիճները Փարվանա :**

Արտասովոր գեղեցկությամբ օժտված արքայադուստրը նույնքան էլ արտասովոր պահանջ է ներկայացնում իր ձեռքը խնդրող իշխանագուճակներին՝ Ով կբերի անշեջ հուրը,  
Նա է ընտրած իմ փեսան...

Գանձերից, անգին քարերից, ֆիզիկական ուժից առավել աղջիկը նախընտրում է վեհն ու գեղեցիկը, անիմանալին ու անվերծանելին՝ սերը՝ անշեջ հուրը: Բայց այս աշխարհում անհնար է գտնել անշեջ հուրը. Սպասումից թառամում է նրա սիրտը, կյանքը դառնում է «պաղ ու տխուր», ու այնքան է արտասովոր ու սուգ անում.

Որ լիճ կըտրեց արտասուքը,  
Ծածկեց քաղաքն ու ամրոց...

Այսօր էլ Աբուլի լանջին «խոր Փարվանա լիճն է ծըփում, հըստա՛կ, ինչպես արտասուք»: Մաքուր ու աստվածային սերը, զոհողություններ պահանջելով հանդերձ, մնում է անհասանելի... Հավերժական սիրո գաղափարն է ընկած Ավետիք Իսհակյանի «Հավերժական սերը» լեգենդում: Արևելյան մի հին զրույց է ընկած այս լեգենդի հիմքում. Սիրո անմարելի ուժը մղում է Էլ-Սամանին՝ փարվել իր բամբիշին ու կատարել ինքն իրեն ու իր սիրած Էակին տված խոստումը: Նրա սերը անհամեմատելի է ժամանակի ու արեգակի հետ, ժամանակը վախճան կունենա, արևը մի բուռ մոխիր կդառնա, « բայց իմ սերը վախճան չունի, հուն չունի: Նա հավերժ է, նա անշեջ է, նա անմահ... »:

Անցնում է ժամանակ, Էլ-Սամանը նույնպես մեռնում է՝ գրկած իր բամբիշին և սառած շրթունքներով համբուրելով նրան:

Շիրմի վրա բարձրացած աշտարակը վկայում է Էլ-Սամանի անանց սիրո մասին. մահն անգամ անկարող է հաղթել սիրուն, քանի որ այն հավերժական է, « հաղթապանծ » :

Երկու գործերում էլ փառաբանվում է կյանքի խորհուրդը հաստատող սերը, որին աշխարհում ոչ մի ուժ հաղթել չի կարող:

Ծփում է Փարվանա լիճը՝ օրորելով արքայադստեր ու սիրավառ իշխանագուճակների երագած սերը, վեր է խոյանում աշտարակը՝ վերահաստատելով սիրո անիմանալի խորհուրդը:

2. Շիրվանզադեի « Արտիստը » վիպակը գրվել է Օդեսայում, ուր արքայազն էր գրողը:

«Արտիստը» վիպակի մեջ Շիրվանզադեն դրել է իր ամբողջ սերն ու համակրանքը , հոգու ցավն ու մորմոքը: Գլխավոր հերոսը Լևոնն է, որ ձգտում է դուրս թռչել ցուրտ կյանքից ու միջավայրից, ազատվել մոր ամենօրյա կշտամբանքներից:

Լևոնը օպերային վարսավիրի աղքատ զավակ է, բայց ամբողջ Էուրոպամբ արտիստ է, մեկն այն գեղեցիկ հոգիներից, որոնք ծնվել են երագելու, գեղեցիկը պաշտելու:

Նա « ազնիվ է որպես նորածին և զգայուն՝ որպես քնարի լար » :

Լևոնը կարող էր դառնալ լավագույն մարդ, տաղանդավոր երաժիշտ, եթե գտներ բարեբեր հող ու պայմաններ, բայց կործանվում է կյանքի արշալույսին :Ինչո՞ւ է դժբախտ Լևոնը: Դժբախտ է, որովհետև աննպաստ են հասարակական պայմանները. մարդիկ չար են ու անտարբեր: Մի ուսանող նրան նույնիսկ հոգեկան հիվանդ է անվանում, քանի որ նրա տարիքի ու զգացումների միջև համերաշխություն չի տեսնում: Նրան պաշտպանում է Կավալլարոն՝ հայտարարելով, որ Լևոնը տաղանդավոր է, բայց դժբախտ, որովհետև չի ծնվել կյանքի բարեհաջող պայմաններում;

Նա սիրում է Լուիզային, հավատում է, որ աղջիկը գնահատում է իրեն, աշխատում է օրնիբուն, որպեսզի գումար վաստակի նրան հասնելու համար: Բայց կողոպտվում է ու....

«Նա մարգարիտ է ցեխի մեջ». ցեխը այն միջավայրն է , որտեղ ապրում է թատրոնով տարված վարսավորի որբացած զավակը: Հորից ժառանգել է սերը թատրոնի նկատմամբ, որ հասնում էր անձնագոհության:

Նա նվագում է « Մադրիդի շրջմուխկը», որը ըստ էության ինքն էր: Ի վերջո, նա վերջնականապես հուսալքվում է , երբ լսում է, որ Լուիզան ամուսնացել է:Հօդս են ցնդում բոլոր երազները, մեռնում է հույսը, և նա գնում է նավահանգիստ, որտեղից պետք է մեկներ Իտալիա, ու նրան գտնում են ինքնասպան եղած այն նավի տակ, որը նրան մի օր պիտի տաներ երազելի Իտալիան...

Լևոնը մաքառում էր հանուն գեղեցիկի, հանուն սիրո...

Նա այնքան նուրբ է, կարծես հյուսված է երազներից:

Ահա թե ուր կարող են հասցնել սոցիալական անհավասարությունն ու անարդարությունը տաղանդավոր պատանիներին:

**3.Սկյուտարի սոխակ. Այդպես են բնորոշել Դուրյանին:Վաղամեռիկ հանճարի սիրո աշխարհը երազային, հոգեթով աշխարհ է , որտեղ արարվում է զգացմունքը՝ Բույլ մը նայվածք, փունջ մը ժպիտ,**

**Քուրա մը խոսք դյուլթեց իմ սիրտ:**

Բանաստեղծը հրդեհվում է « Բույլ մը նայվածքից», նրա հոգին ջերմանում է « քուրա մը խոսքից», հյուսվում է սիրո հեքիաթը, որը ավարտվում է երջանկության դյուլթանքով, սիրուց մոլորված բանաստեղծի հոգին ճանաչում է գեղեցկության այրող բոցը, նա զգում է սիրած էակի՝ անապակ վտակի պես տրոփող սիրտը, դալկահար սյուքի անմեղությամբ լցված նրա հոգին ճանաչում է հավատարիմ քնարը, որ պատրաստ է հեռալ նրա մատների նվագում: Նրա սերը երազային է, դա չարված խոստովանության հուշ է, որն ավարտվում է երազային աշխարհում՝

**Թոթվեց թևերն հոգիս մուլար,**

**Ճանչեց ըզնե գեղ ու կրակ.**

**Բույլ մը նայվածք, փունջ մը ժպիտ,**

**Քուրա մը խոսք դյուլթեց իմ սիրտ...**

4.Տխրության և հրաժեշտի գեղեցիկ շղթա է այս գագեղը՝ լի անհուն թախիժով: Տերյանը հրաժեշտ է տալիս բոլորին՝ չար ու բարի մարդկանց, հեռու ու մոտ ընկերներին, երկնքին, ծովին, անտառներին, գարնան ամպին: Միով բանիվ՝ բնությանն ու մարդուն:Նա այդ անում է մարդկայնորեն ներելով բոլորին, անչար ու անհիշաչար, և այստեղ ի հայտ են գալիս հակադիր տրամադրությունները: Թվում է՝ բանաստեղծը պիտի տրտնջա, չարանա, չէ՞ որ թողնում է ծաղկող ու ապրող աշխարհը: Բայց նա հեռանում է՝ փայփայելով միայն մի շա՛տ մարդկային ցանկություն՝ Բարի հիշեք ինձ ձեր սրտում , մնա՛ք բարով, մնա՛ք բարով: Հեռանում է՝ « չբացված ծաղիկների, կյանքի բովում չկիզված հոգիների, վառ-խլրտուն մանուկների մեջ ծնվելու երազանքով»:

Տխուր , բայց անչար է հեռանում բանաստեղծը.անընդհատ կրկնվող « մնաք բարով» - ները ցավ ու տխրություն են ծնում ընթերցողի մեջ՝ միաժամանակ հաստատելով բանաստեղծի հավատամքը. « Բարի հիշեք ինձ ձեր սրտում»:

Հակադրվում են հեռանալու թախիժը և հիշվելու արդար, լուսավոր հավատը: Տերյանին բնորոշ շրջասույթը՝ « Աշնան երգիչ»:

Օ՛, հեռու ընկեր իմ, օ՛ Վահա՛ն Տերյան, վերադարձի՛ր ...Վահա՛ն Տերյան, ինչպե՞ս երգեմ հիշատակը քո, Թող լուռ փռվի հիմա իմ դեմ անլույս երեկո...